ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀՇՁԲ-25/36 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՑՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան 07.05.2025թ.

2025 թ-ի մայիսի 7-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀՇՁԲ-25/36ծածկագրով («Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի շրջանակներում էներգահամակարգի ջերմոցային գազերի ցանցային արտանետումների ստանդարտացված գործակցի մշակման գծով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ռ.Շահազիզյան	-հանձնաժողովի նախագահ	Ծրագրերի իրականացման և մոնիտորինգի բաժնի պետ
Ա.Աջամօղլյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրերի իրականացման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ, Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի համակարգող
Դ.Նիկողոսյան	-հանձնաժողովի անդամ	Գործերի կառավարման և գնումների բաժնի պետ/գործերի կառավարչի պարտականությունները կատարող
Գ.Արաբյան	-հանձնաժողովի անդամ	էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման օպերատոր
Գ.Ասրյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրի հաղորդակցության և տեղեկատվության տարածման փորձագետ

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից, և հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 5 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ռ.Շահազիզյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա.Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Scanned with CamScanner

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-25/36 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին
2. Ընտրված մասնակից որոշելու մասին
3. Պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-25/36 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ռ.Շահազիզյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի բնութագիրը և անհրաժեշտ չափորոշիչները:

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-25/36 ծածկագրով հայտերը բացվել են հրավերի սահմանված օրը և ժամին՝ 2025 թվականի ապրիլի 16-ին ժամը 14:00: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել: Պարզաբանումներ չեն կատարվել:

Հանձնաժողովի նախագահ Ռ.Շահազիզյանը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի գինը:

Հ/Հ	Գնման առաջկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1	Էներգահամակարգի ջերմոցային գազերի ցանցային արտանետումների ստանդարտացված գործակցի մշակման գծով խորհրդատվական ծառայություններ	4 212 000

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-25/36 ծածկագրով ընթացակարգի մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցեներ	Հեռախոսահամար
1	Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ	ք.Երևան 0025, Մյասնիկյան պող 5/1	077505606

Հանձնաժողովը արձանագրեց, որ

Մասնակից/ներ/ը հայտ/եր/ը կազմել և ներկայացրել են ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-25/36 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան:

- Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Scanned with CamScanner

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացի Հրավերում սահմանված որակավորման պահանջով 2-րդ կետով փորձառության վերաբերյալ փաստաթղթերով: Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվեց մեկ աշխատանքային օրով և մասնակիցը ներկայացրեց նախկինում կատարված նմանատիպ հոդվածով կատարված ծառայությունը:

• Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում

Չափա-բաժնի համար	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները		
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	1	Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ	3510000	702000	4212000

Որոշվեց Ռ.Շահազիզյան կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Մասնակցի կողմից ներկայացված հայտը 1 չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց

Որպես ընթացակարգի

- 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամը:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա.Հակոբյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝
Ռ.Շահազիզյան

Հանձնաժողովի անդամներ՝
Ա.Աջամօղլյան

Scanned with CamScanner

Դ.Նիկողոսյան _____

Գ.Արաբյան _____

Գ.Ասրյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Հակոբյան _____

Scanned with CamScanner